

ւելի հեշտ են անցել ճառագայթները և որոնցից առաւել դժուար:

Բեօնտգենը այդ փորձից հետաքրքիր եզրակացութեան եկաւ. ճառագայթները հիւսուածքների միջից հեշտութեամբ անցան, այն ինչ ոսկրներից ոչ, այդ պատճառով լուսանկարչական թիթեղի վրայ ստացաւ ոչ թէ բոլոր ձեռքի, այլ միայն նրա կմաղքի ստուերագիծը: Նայելով թէ ինչպէս է կատարուած փորձը և ինչ գործիքներ են գործադրուում այդ միջոցին, նկարն էլ լինում է առաւել կամ պակաս պարզ:

Բեօնտգենի ճառագայթների այն առանձնայատկութեան շնորհիւ, որ նրանք անցնում են մարմնի կակուղ մասերից և անանցանելի են ոսկրների, մետաղների (բացի ալիւմինից) և մի քանի մարմինների համար, այն գործնական հետեւանքների հասան, որ այդ ճառագայթները կարող են գործադրութիւն ստանալ բժշկականութեան, աւելի ճիշտ, անդամահատութեան մէջ: Եթէ, օրինակ, մարմնի այս կամ մասում մնացել է ասեղ, գնդակ և կամ մի ուրիշ առարկայ, Բեօնտգենի միջոցով հնարաւոր է լինում որոշել թէ ո՞րտեղում է մնացել այդ արտաքին մարմինը: Այդ ճառագայթներով լուսաւորելով վիրաւորուած տեղը՝ մենք կստանանք այն մարմնի պարզ ստուերագիծը, որ մնացել է մարմնի այս կամ այն մասում:

Թէ ի՞նչ է սպասում Բեօնտգենի ճառագայթներին ապագայում, այժմ դժուար է մի քան ասել: Սակայն կարելի է ենթադրել, որ կանոնաւոր փորձերը, որ շատերը կանեն այդ ճառագայթների հետ, միջոց կտան ստանալու ոչ միայն առարկաների ստուերագիծը, ինչպէս այժմ են ստանում, այլ և առաւել կատարելագործած արտատիպեր, ուր ըստ ցանկութեան հետախոյզի կարելի կլինի ստանալ կենդանի մարմնի ցանկալի մասի նկարը:

Ա. Սպարապետեան:

Սոյն թուականի յո՞ւսուար ամիսն ամբողջ Եւրոպայի մանկավարժական աշխարհը տօնեց Հայերէն Պետալոցցի հանրահռչակ մարդասեր-մանկավարժի ծննդեան հարիւր յիսնամեայ յոբելեանը: Մանաւանդ առանձին շքով տօնուեց այդ հանգէսը Պետալոցցու հայրենիքում: Զուգեցրեալում: Թընե, Յիւրիե, Լուցերն և այլքաղբ-

ների տարրական և միջնակարգ դպրոցները մեծ հանգէսներով վերանորոգեցին «մանկավարժութեան հայր»՝ Պետաւոյցցու անունն ու գործերը՝ մատաղ սերնդի սրտերում: Դափնեայ պսակներով ու գունաւոր ծաղիկներով շքեղատուեցան մեծ մանկավարժի արձաններն ու անդրինները. յայտնի և ներկայումս հռչակ ու հեղինակութիւն ունեցող մանկավարժներ ուղերձներ, ճառեր արտասանեցին՝ դրուատելով Պետաւոյցցու մանկավարժական ուղղութիւնն ու գործունէութիւնը. նրանք բացատրում, բնագոյտում ու պարզաբանում էին մեծ մանկավարժի բազմաթիւ դրուածքներն ու հեղինակութիւնները, որոնք թարգմանուած են բոլոր եւրոպական լեզուներով և կազմում են բոլոր մեծ ու փոքր ազգերի մանկավարժական գրադարանների ամենաթանկագին գարգը:

Պետաւոյցցին իւր քարոզած դաստիարակչական սկզբունքներով միմյան իւր ազգի և հայրենակիցների աչքում չստացաւ, «մեծ մանկավարժի» պանծալի անունը, այլ ամբողջ աշխարհն այսօր ընդունում է և գործադրում է նրա կրթութեան սխտեմի հիմնաքարերը՝ հետզհետէ աւելի մշակելով ու պարզաբանելով:

Հայ մանկավարժական աշխարհում եւս անծանօթ չէ Պետաւոյցցու անունը՝ մեր պարբերական մամուլի զանազան թերթերում եւ զանազան ժամանակ լոյս են տեսել նրա մասին կենսագրական եւ նրա մանկավարժական սխտեմին վերաբերեալ յօդուածներ, բայց հայ գրականութիւնը գեւա զուրկ է նրա իսկական հեղինակութիւնների հայերէն թարգմանութիւններէր. այժմ այդ փորձն էլ արուած է եւ ուրախ ենք, որ «ՀՈՒՄԱՅ»-ի էջերում, իբրեւ յաւելում, տալիս ենք մեր ընթերցողներին Պետաւոյցցու նշանաւոր եւ ոչ զուտ մանկավարժական, բայց նրա հոգին ու միտքը պարունակող ժողովրդական վէպը՝ «Լինհարգ ու Գերարուգը», որի հրատարակութիւնն իւր ժամանակին Պետաւոյցցու վրայ գործրեց ամբողջ աշխարհի գիտնականների եւ իշխանազների ուշադրութիւնը: Վէպի շարունակութիւնը կտպուի «ՀՈՒՄԱՅ» միւս տարուայ գրքերում:

ԺԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

Նիւթերի առատութեան պատճառով «ՀՈՒՄԱՅ»-ի այս երկրորդ գիրքը բաղկացած է 512 երեսից, այն ինչ անցեալ գիրքը բաղկացած էր 368 երեսից: Չնայելով սորան՝ մենք անկարող եղանք այս հատորում ամփոփել պատրաստի նիւթերից բազմաթիւ կարևոր յօդուածներ, որոնք մնացին հետեւեալ տարուայ առաջին գրքի համար: